
**ՆԵՐԱԿԱՅՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ. ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՐԱՆՈՒՇ ԿԵՍՈՑԱՆ

Հայտնի է, որ ներակայումը լեզվին մշտապես ուղեկցող երևույթ է և դրսևորվում է նրա բոլոր մակարդակներում՝ ուրույն տեղ զբաղեցնելով լեզվի գործառության մեջ: Եթե լեզվի գործառույթը գնահատելիս հաշվի առնվեր միայն արտական՝ առանց ներակայի, ապա լեզվական հաղորդումը նշանակալիորեն աղքատ կլիներ, մյուս կողմից՝ եթե բոլոր ներիմաստներն արտակայվեին, լեզուն չափազանց ծանրաշարժ կլիներ¹: Անշուշտ, յուրաքանչյուր մակարդակում ներակայման գործառույթները և դրսևորումները միանգամայն տարբեր են: Օրինակ՝ բառային մակարդակում այն մասնակցում է տարբեր բառերի կազմությամբ, երբ բառի տարբեր բաղադրիչներ կարող են արտահայտվել անուղղակիորեն՝ առանց ձևային դրսևորում ստանալու: Իսկ շարահյուսական մակարդակում այն առանձնահատուկ դերակատարում ունի տարբեր բառակապակցությունների կազմության, դրանց ընդհանրական իմաստների արտահայտման գործում և նախադասության կառուցվածքում, երբ լեզվի խնայողության սկզբունքն ավելի բարձր աստիճանով է դրսևորվում:

Բառակապակցությունների մակարդակում կարելի է առանձնացնել ներակայման երկու հիմնական գործառույթ: Առաջին՝ այն հնարավորություն է տալիս բազմանդամ բառակապակցություններն արտահայտելու ավելի սակավաբաղադրիչ բառակապակցություններով, օրինակ՝ *համաժամանակյա աղյուսակներ* – միևնույն ժամանակամիջոցում կատարված **դեպքերի՝ երևույթների** աղյուսակներ². Երկրորդ՝ ներակայումը ծառայում է բառերի ներքին հարաբերությունների խորքային բացահայտմանը: Այսպես՝ *համաժամանակյա* ածականը մակերեսային վերլուծությամբ հանդես է գալիս որպես *աղյուսակներ* գոյականի որոշիչ, սակայն ավելի խոր վերլուծությունը ցույց է տալիս, որ *համաժամանակյա* ածականը, ա-

¹ Տե՛ս **Багдасарян В. Х.** Проблема имплицитного, Ер., 1983, էջ 12:

² **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 799:

ռաջին հերթին, ներակայությամբ արտահայտված *դեպքեր* գոյականի որոշիչն է, հետևաբար այն, կարելի է ասել, անուղղակիորեն է դառնում *աղյուսակներ-ի* լրացում-որոշիչը. *համաժամանակյա* են ոչ թե *աղյուսակները*, այլ այն *դեպքերը՝ երևույթները*, որոնք ներկայացվում են այդ աղյուսակներով: Նույն ձևով՝ մեր նախնադարյան մշակույթի տարբեր փուլեր ունեն իրենց անվանումները՝ արտահայտված բառակապակցություններով, ինչպես՝ *քարե դար, պղնձի դար, բրոնզե դար*: Այս բառակապակցությունները կազմվել են որոշակի իմաստային տարրերի ներակայման միջոցով, ինչպես՝ *քարե դար* նշանակում է «քարե **գործիքներ պատրաստելու** նախնադարյան մշակույթի դարաշրջանը»³, այսինքն՝ ոչ թե դարն է քարից, պղնձից կամ բրոնզից, այլ այն գործիքները, որոնք պատրաստվել են այդ դարաշրջաններում: Կամ՝ լայն գործածություն ունեցող *արագ ինտերնետ* բառակապակցությունը նշանակում է «արագ **աշխատող** ինտերնետ», այսինքն՝ խոր վերլուծությամբ ստացվում է, որ *ինտերնետ* գոյականի անմիջական որոշիչը ներակայորեն ըմբռնվող *աշխատող* ենթակայական դերբայն է, իսկ *արագ-ը աշխատող-ին* է լրացնում՝ հանդես գալով որպես կողմնակի ձևի պարագա: Այլ օրինակներ՝ *կցական լեզուներ* – կցականությամբ բնորոշվող լեզուներ, *ինտերնետ ծառայություններ* – ինտերնետով իրականացվող // առաջարկվող // մատուցվող ծառայություններ, *ապագա պլաններ* – ապագայում իրականացվելիք պլաններ, *մշտական հանձնաժողով* – մշտապես՝ մշտական ձևով գործող հանձնաժողով և այլն: Այսինքն՝ ինչպես ցույց է տալիս քննությունը, ներակայման երեկույթը օգնում է բառերի ներքին հարաբերությունները ավելի հստակ ու խորությամբ պատկերացնելուն: Նկատենք նաև, որ ներակայումը նպաստում է հոմանշային գույգերի առաջացմանը, որոնց մի բնեռում արտակայորեն արտահայտված տարբերակն է, մյուսում՝ ներակայորեն արտահայտվածը:

Ներիմաստ է պարունակվում դերբայ գերադաս անդամ ունեցող այն բառակապակցություններում, որոնք կիրառության մեջ շատ հաճախ հանդես են գալիս առանց դերբայի, այլ կերպ ասած՝ դերբայի իմաստն արտահայտվում է ներակայորեն, ընդ որում՝ տվյալ կառույցում հեշտությամբ կարելի է ենթադրել ներակայված դերբայը, օրինակ՝ «Ձորականը, որ բավական հասակավոր, ջլուտ, բարձրահասակ մի անձնավորություն էր՝ *մտահոգ հայացքը գետնին (հառած)*՝ անցավ իրեն հետևող մի խումբ վանականների միջով և անխոս կանգնեց, անհամբեր սպասելով ինչ-որ մի բանի» (Գ. Դեմիրճյան, Վարդանանք, Եր., 1987, էջ 7), «Առջևից գնում էր իշխանը՝ *կապտորակ նժույգի վրա (նստած)*, հետևից՝ թիկնապահները հարգալիք հեռավորությամբ» (Ստ. Չորյան, Հայոց բերդը, Եր., 1959, էջ 5): Նման կապակցություններն ըն-

³ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Եր., 1976, էջ 1561:

դունված է կոչել երկանդամ դերբայագուրկ բառակապակցություններ⁴, այսինքն՝ անվանումն իսկ խոսում է դերբայի ոչ անմիջական, անուղղակի արտահայտման և միաժամանակ դրա իմաստի ենթադրման մասին:

Յուրօրինակ կառույցներ են բայանունների և դրանց լրացումների կապակցությունները, օրինակ՝ *փախուստ բանտից, կոչ երիտասարդներին, ուղերձ ժողովրդին, հարձակում գիշերով, հանդիպում ամրոցում* և այլն: Այսպիսի կառույցներում ենթադրվում է թաքնված դերբայական իմաստ, քանի որ, օրինակ, *փախուստ բանտից* ըստ էության նշանակում է «փախուստ՝ **կատարված** բանտից», *կոչ երիտասարդներին*՝ «կոչ՝ **ուղղված** երիտասարդներին» *ուղերձ ժողովրդին*՝ «ուղերձ՝ **ուղղված** ժողովրդին» և այդպես շարունակ: Այսինքն՝ նման կառույցներում նկատելի է դերբայական իմաստի ոչ բացահայտ՝ ներակա արտահայտում: Խորքային մակարդակը նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ բայանունների անմիջական որոշիչներն ուղղակիորեն չարտահայտված դերբայներն են, իսկ *բանտից, երիտասարդներին, ժողովրդին, գիշերով, բանտում* բառերը, որ այդ դերբայների լրացումներն են՝ խնդիրները կամ պարագաները, բայանվան որոշիչ են դառնում անուղղակիորեն: Իգուր չէ, որ բայանունների լրացումների բնույթի (որոշիչ՝ թե՛ խնդիր կամ պարագա) վերաբերյալ կան տարակարծություններ: Այսպես՝ Ս. Գյուլբուդադյանը նշում է, որ բայանուն գոյականների որոշ լրացումներում ուժեղ է արտահայտված որոշչային, իսկ մյուսներում՝ խնդրային-պարագայական իմաստը, ինչով պայմանավորված՝ վերջիններս կարող են համարվել նաև խնդիր կամ պարագա⁵: Ռ. Իշխանյանը բայանվան լրացումները լայն առումով անվանում է խնդիրներ, իսկ նեղ առումով՝ մականուն՝ որոշիչ⁶: Եվ իսկապես, կարելի է ասել, որ նշված լրացումները նեղ առումով՝ մակերեսային քննությամբ են որոշիչ, իսկ լայն առումով (եթե նկատի ունենանք խորքային մակարդակը, որի միջոցով վեր են հանվում ներակայված բաղադրիչների իմաստները) դրանք խնդիրներ են:

Ուշագրավ են նաև ածականական այն բառակապակցությունները, որոնց ստորադաս անդամն արտահայտված է ուղղական հոլովով դրված գոյականով, ինչպես՝ *մազերը սև, աչքերը կապույտ, սիրտը տխուր, հոգին մաքուր* և այլն: Նման բառակապակցություններում առկա է հոլովական իմաստի ներակայում այն առումով, որ *մազերը սև* նշանակում է *սև մազերով, աչքերը կապույտ՝ կապույտ աչքերով* և այլն, այսինքն՝ ուղղական հոլովը հանդես է գալիս գործիական հոլովի նշանակությամբ («մի բան ունեցող»): Նման կազմությունները տարած-

⁴ Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 150:

⁵ Տե՛ս Ս. Գյուլբուդադյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988, էջ 151:

⁶ Տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 145:

ված են խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ:

Առավել բազմազան են ներիմաստի դրսևորման միջոցները նախադասության կազմում: Նախ և առաջ որպես այդպիսին հանդես է գալիս **բացթողումը**: Ինչպես նշել է Ա. Աբրահամյանը, նախադասությունը սուկ պատկերող չէ, այլ առաջին հերթին միտք հաղորդող, և մտքի խճանկարի մեջ ընդգրկվող տարրերը որոշում է հենց միտքն արտահայտողը: Չկա մի նախադասություն, որն ընդգրկի բոլոր պարագաները, որոշիչների անվերջ շարքեր և այլն⁷: Մարդիկ սովորաբար ձգտում են օգտագործելու այնքան բառեր, որքան անհրաժեշտ է իրենց մտքերն արտահայտելու համար: Հետևաբար ներակայորեն կարող են արտահայտվել նախադասության տարբեր անդամներ, քանի որ նկատի է առնվում, որ դիմացինն ունի բավական գիտելիքներ և կյանքի փորձ՝ բաց թողնված տարրերն ինքնուրույն ըմբռնելու համար: Շատ դեպքերում կարող են ուղղակիորեն չարտահայտվել այնպիսի միավորներ, որոնք, պայմանավորված իրադրությամբ, ինքնին հասկանալի են, ենթադրվում են, այսինքն՝ ձևային արտահայտություն չեն ստանում, սակայն դրանց իմաստն ընկալվում է: Այսպես՝ առօրյայում իրար հանդիպելիս մենք կարող ենք մեր ծանոթին հարցնել. «Ո՞ւր»: Հասկանալի է, որ հարցը հետևյալն է. «Ո՞ւր **ես գնում**», այսինքն՝ ստորոգյալի՝ **գնում ես** դիմավոր բայի իմաստը ներակայված է, ինչը կարող է պայմանավորված լինել նաև **ո՞ւր** դերանվան իմաստով, որը ցույց է տալիս գործողության ուղղությունը: Կամ՝ հյուրասիրության ժամանակ դիմացինին պարզապես հարցնում ենք. «Թե՛ յ, սո՛ւրճ, թե՛՞ հյուր», այսինքն՝ նկատի է առնվում հետևյալը. «Թե՛ յ **կցանկանաք**, սո՛ւրճ, թե՛՞ հյուր»: Որպես ընդհանուր երևույթ կարելի է նշել, որ դիմավոր բայի իմաստը ներակայված է բարեմաղթանք, անեծք պարունակող անվանական անդամ նախադասություններում, օրինակ՝ «*Կյանքդ երկար*» (= Կյանքդ երկար **լինի**), «*Անեծք նրա չար գործին*» (= Անեծք **լինի** նրա չար գործին), «*Նզովք պատերազմին*» (= Նզովք **լինի** պատերազմին) և այլն:

Ս. Աբրահամյանն անդրադարձել է բացառական հոլովի՝ մասնակի իմաստով կիրառություններին առնչվող ներակայմանը՝ նկատի ունենալով մասնական ենթական, մասնական ուղիղ խնդիրը և վերաբերության անուղղակի խնդիրը⁸: Նախադասության մեջ բացառականով խնդիրներից երբեմն ուղղակիորեն չի արտահայտվում նաև ներգործող անուղղակի խնդիրը, որը, սակայն, կարող է ենթադրվել: Ուստի բոլորովին պատահական չէ, որ առանձնացվում են երկանդամ և եռանդամ

⁷ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Ներակայություն և հավելորդայնություն. լեզվական արտահայտման երկու բևեռները, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 2 (17), 2015, էջ 6:

⁸ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Ներակայումբ և հայոց լեզվի զարգացման մի քանի հարցեր, «Լրաբեր հասարակական գիտություններին», № 1 (605), 2002, էջ 14:

կրավորական նախադասություններ՝ պայմանավորված ներգործող ինդիքի արտակա կամ ներակա արտահայտությամբ: Երկանդամ կրավորական նախադասություններում ենթադրությունը թեև անորոշ է լինում, բայց նայնպես հասկացվում է, որ գործողությունը կատարվել է ինչ-որ մեկի կողմից, օրինակ՝ հմմտ. «Այդ ծրագիրը քննարկվում է» և «Այդ ծրագիրը քննարկվում է հանձնաժողովի/կառավարության կողմից»: Ներիմաստ պարունակող երկանդամ կրավորական կառույցներից պետք է տարբերել այն դեպքերը, երբ ներգործող խնդիր չի ենթադրվում, այսինքն՝ ներգործական սեռի բայերից կազմված կրավորաձև բայ-ստորոգյալների առկայության դեպքում ենթական հանդես չի գալիս ուրիշի գործողությունը կրողի դերում: Այդ դեպքերը մանրամասն ներկայացրել է Ա. Աբրահամյանը: Այսպես՝ ներգործող խնդիր չի կարող արտահայտված լինել կամ ենթադրվել այն նախադասություններում, որոնցում **-վ-** ածանց ունեցող բայերը (սրանք Ա. Աբրահամյանը անվանում է միջին-անդրադարձ սեռի բայեր)

1. ցույց են տալիս մի գործողություն, որի իրագործումը հնարավոր է առարկաների համատեղ գործունեությամբ, օրինակ՝ «Հրապարակում **հավաքվել էր** մեծ բազմություն»,

2. ընդգծում են առարկայի հիմնական հատկանիշը կամ տարբեր հատկանիշներից մեկը, օրինակ՝ «Թելը **կտրվում է**», «Բաժակը **կոտրվում է**»,

3. ունեն անդրադարձ նշանակություն, այսինքն՝ ենթական է իր գործողության կրողը, օրինակ՝ «Երեխան արագ **հագնվեց** և վազեց դուրս»,

4. ունեն փոխադարձ նշանակություն, այսինքն՝ գործողությունը կատարվում է երկու կողմերի փոխադարձ հարաբերությամբ, օրինակ՝ «Երկար բաժանումից հետո հանդիպելով՝ նրանք ամուր **գրկախառնվեցին**»,

5. արտահայտում են ընդհանուր միջին-անդրադարձ նշանակություն, այսինքն՝ գործողությունը սահմանափակվում է ենթակայի մեջ, օրինակ՝ «Վիրավորը ցավից **գալարվում էր**»⁹:

Ինչպես ցույց է տալիս քննությունը, նախադասության մեջ կարող են բաց թողնված լինել տարբեր անդամներ, որոնք ընկալվում են ներակայորեն: Մակայն բացթողումից՝ որպես ներիմաստի դրսևորման միջոցից, պետք է տարբերակել **զեղչումը**: Բացթողման և զեղչման ռճաբանական գործառույթը նույնն է, այն է՝ ասույթի տարրի մտադրված բացթողում՝ խոսքին դինամիզմ, զգացմունքային հագեցվածություն հաղորդելու նպատակով, սակայն զեղչումը հեշտությամբ վերականգնվում է նախորդող կամ հաջորդող համատեքստից, մինչդեռ բացթողումային կառույցներում բաց թողնված անդամը համատեքստից չի վերականգն-

⁹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 633-637:

վում¹⁰: Ռուս լեզվաբան Ի. Վ. Առնոլդը, անդրադառնալով բացթողման և ներակայման տարբերությանը, նշում է, որ բացթողումը թույլ է տալիս խուսափել կրկնությունից, լեզվական անփոփոխակ (ունիվերսալիա) է, վերականգնվում է միանշանակորեն, մինչդեռ ներակայմանը հատուկ է տարբերակայնությունը¹¹: Ըստ էության, նա, բացթողում ասելով, հենց գեղչումը նկատի ունի: Հետևաբար գեղչումը, որը սովորաբար հանդես է գալիս թերի նախադասություններում և նույնպես ծառայում է լեզվի տնտեսման օրենքին, ինքնին չի կարող ներիմաստի արտահայտման միջոց լինել, քանի որ գեղչված անդամն արդեն իսկ գործածված է նախադասության կազմում, և որևէ լրացուցիչ, թաքնված իմաստ չի հաղորդվում: Օրինակ՝ «Առաջին ձիավորը **գնում էր** Վանա ծովակի հարավարևելյան եզերքով, իսկ մյուսը՝ նույն ծովակի արևմտյան եզերքով»: Բերված նախադասության երկրորդ բաղադրիչում բաց է թողնված, ավելի ձիշտ՝ գեղչված է *գնում էր* ստորոգյալը, բայց չի կարելի ասել, թե դրա իմաստը ներակայված է, քանի որ այն արդեն իսկ արտահայտված է առաջին բաղադրիչում: Նույն ձևով չի կարելի ասել, թե ենթակայի գեղչումով կազմված թերի նախադասություններում ենթական ներակայված է: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ գեղչումն առավել հաճախ դրսևորվում է երկխոսություններում:

Բացթողումը՝ որպես ներիմաստի արտահայտման միջոց, հանդես է գալիս ոչ միայն պարզ, այլև բարդ ստորադասական նախադասության կազմում: Կարող է բաց թողնվել բարդ նախադասության որևէ բաղադրիչ նախադասություն, հիմնականում՝ գերադաս նախադասությունը: Նման դեպքերում դրսևորվում է ներակայման մեկ այլ գործառույթ: Պայմանավորված գերադաս նախադասության ներակայմամբ՝ տեղի է ունենում բովանդակության պլանում ստորադաս նախադասության շարահյուսական դերի պայմանական փոփոխություն. իրականում ստորադաս նախադասությունը կարծես իր վրա է վերցնում գերադաս նախադասության դերը, բայց միայն արտահայտության պլանում, քանի որ խորքային քննությունը հստակեցնում է բաղադրիչ նախադասությունների փոխհարաբերությունները: Օրինակ՝ «*Երբ տանտերը վերադարձավ, հյուրն արդեն հեռացել էր*», այսինքն՝ «*Երբ տանտերը վերադարձավ, տեսավ/խնայավ, որ հյուրն արդեն հեռացել էր*». ներակայված է «**տեսավ/խնայավ**» գերադաս նախադասությունը, ինչի հետևանքով առաջին հայացքից գերադաս է թվում «**հյուրն արդեն հեռացել էր**» իրականում ստորադաս նախադասությունը¹²:

¹⁰ Sté u **И. Камагина**, Эллипсис и сходные синтаксические явления в современном русском языке // Вестник РУДН, серия Теория языка. Семиотика. Семантика, 2015, № 1, էջ 172 / <https://cyberleninka.ru/article/v/ellipsis-i-shodnye-sintaksicheskie-yavleniya-v-sovremennom-russkom-yazyke> (մուտք՝ 03.11.2019):

¹¹ Sté u **И. Арнольд**, Импликация как прием построения текста и предмет филологического изучения // «Вопросы языкознания», М., 1982, № 4, էջ 86:

¹² Ասացական իմաստ ունեցող ստորոգյալ-գլխավոր նախադասության ներակայ-

Կարող ենք եզրակացնել, որ ինչպես բառակապակցությունների դեպքում էր ներակայումը ծառայում բառերի ներքին հարաբերությունների խորքային բացահայտմանն ու ճիշտ ընկալմանը, այնպես էլ բարդ ստորադասական նախադասություններում գերադասի ոչ անմիջական արտահայտման դեպքում օգնում է բաղադրիչ նախադասությունների շարահյուսական դերի հստակեցմանը, ընդ որում, երկու դեպքում էլ այն հնարավորություն է տալիս բազմանդամ լեզվական կառույցը (բառակապակցությունը և նախադասությունը) ներկայացնելու ավելի սակավաբաղադրիչ համարժեք կառույցով:

Բացի այն բանից, որ կարող են բաց թողնված լինել նախադասության առանձին անդամներ, որոշակի կազմությամբ նախադասությունն ամբողջությամբ կարող է հանդես գալ որպես մտքի յուրօրինակ ներկայիչ: Այս դեպքում նկատի են առնվում նախադասության արտահայտության և բովանդակության պլանները: Արտահայտության պլանում կարող է ներկայացված լինել մի բան, իսկ բովանդակության պլանում թաքնված լինել միանգամայն այլ բան՝ ավելի խոր միտք: Մա, իհարկե, պայմանավորված է իրադրությամբ և հեղինակի նպատակադրմամբ: Այս առումով որպես ներիմաստի արտահայտիչ հանդես են գալիս այն հարցական նախադասությունները, որոնք արդեն իսկ պարունակում են պատասխանը (ճարտասանական հարց), օրինակ՝ «-Հիմա մտածելով ի՞նչ կարող ենք անել, մարե,- ասաց աղջիկը,- նրանց գտնել կարո՞ղ ենք» (Մտ. Ջորյան, նշվ. աշխ., էջ 56): Այստեղ արտահայտվում է այն միտքը, որ *մտածելով ոչինչ հնարավոր չէ անել, նրանց չեն կարող գտնել*: Այսինքն՝ նման նախադասությունները, արտահայտության պլանում լինելով հարցական, բովանդակության պլանում ժխտական են:

Նույնպիսի իմաստ կարող է արտահայտվել բացականչական նախադասություններով, օրինակ՝ «-Այդ դու կարող ես անել, եթե հաղթությամբ պսակես հանդուգն ձեռնարկությունդ,- նկատեց թագավորը,- բայց ի՞նչ կարող են անել քսան հոգիները թշնամու ասիվոր գործության առաջ» (Մուրացան, Գևորգ Մարգպետունի, Եր., 1988, էջ 219), այսինքն՝ Աշոտ Երկաթ արքան ուզում էր այն միտքն արտահայտել, որ քսան հոգին թերևս ոչինչ չեն կարող անել: Նման կառույցները կիրառվում են այն դեպքերում, երբ խոսողը չի ցանկանում ուղղակիորեն արտահայտել իր միտքը՝ դիմացինին չվիրավորելու, չանհանգստացնելու համար, այդ պատճառով ընտրում է հարցական, բացականչական նախադասությունները՝ դրանց տակ թաքցնելով իր բուն, իրական նպատակը, միտքը: Այլ կերպ ասած՝ որոշակի իրադրություններում այս կարգի նախադասությունները հանդես են գալիս որպես յուրօրինակ մեղմասություններ:

Հարցական, նաև բացականչական նախադասությունները երբեմն

ման մի քանի դեպքերի մասին տե՛ս **Ս. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 10:

Էլ բովանդակության պլանում կարող են արտահայտել հրաման, օրինակ՝ «Մի քիչ ցածր չէիք խոսի», որով խոսողը նպատակ ունի արտահայտելու հետևյալ միտքը. «Մի քիչ ցածր խոսեք», «Գիրքը չէիք վերադարձնի», այսինքն՝ «Վերադարձրե՛ք գիրքը», կամ մայրը ձայն է տալիս դրսում խաղացող երեխային՝ ասելով. «Դրսում ցուրտ է», այսինքն՝ «Տուն արի» և այլն:

Բովանդակության պլանում ներիմաստ են պարունակում նաև արտահայտության պլանում ժխտական նախադասությունները, օրինակ՝ «Նա չէր կարող չխոսել այդ մասին», այն է՝ «Նա պետք է խոսեր այդ մասին», «Մինչև թույլ չտամ, չես գնա», այն է՝ «Երբ թույլ տամ, կգնաս» և այլն, այսինքն՝ բովանդակության պլանում ենթադրվում է հաստատական նշանակություն:


Նման դրսևորումները լեզվաբանություն մեջ կոչվում են բուն նպատակադրվածության ներակայում, քանի որ առկա է անհամատասխանություն ասույթի արտակա նպատակադրվածության և հաղորդակցական իրավիճակի միջև: Հիմնական նպատակը հասցեատիրոջը ներկայացվում է հաղորդակցական իրավիճակին չհամապատասխանող հաղորդման միջոցով, ինչից բխում է, որ այն պետք է հասկանալ անուղակի իմաստով¹³:

Ինքնատիպ ներակայիչներ են **կախման կետերը**: Թվարկում պարունակող նախադասությունները երբեմն ավարտվում են կախման կետերով, որոնց ներքո կարող են ենթադրվել թվարկվող անդամներին պաշտոնով հավասարաթեք անդամներ՝ այլ տեսակներ, միջոցներ, ուղիներ և այլն, ինչպես՝ «Երբ մտան առաջին պատահած փողոցը՝ Արշակը նկատեց դիակներ, որ ընկած էին գետնին՝ փոշիների մեջ, տների առաջ, պատերի տակ...» (Ստ. Ջորյան, նշվ. աշխ., էջ 389). բերված օրինակում թվարկվում են տեղի պարագաներ, հետևաբար՝ կախման կետերի տակ կարող են ենթադրվել նաև այլ վայրեր: Կամ՝ «Արել եմ, սակայն հեռանում են գիշերանց, անհայտ ճանապարհներով, անտառներով...» (Ստ. Ջորյան, նշվ. աշխ., էջ 24). այստեղ ևս կարելի է ենթադրել ուրիշ տեղի պարագաներ՝ փախուստի այլևայլ ճանապարհներ, օրինակ՝ լեռներ, թավուտներ և այլն, ինչպես նաև ժամանակի պարագաներ՝ փախչելու տարբեր ժամանակները: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ նմանօրինակ ներիմաստներ է պարունակում «և այլն» արտահայտությունը, որը նշված իմաստով հավասարաթեք է դառնում կախման կետերին: Երբեմն էլ կախման կետեր են դրվում, երբ խոսքն անավարտ է թողնվում, քանի որ խոսողը չի ցանկանում բարձրաձայնել իր միտքը, որն առանձին կառույցներում հնարավոր է հեշտությամբ արտակայել, օրինակ՝ «Շատ կուզեի ասել՝ ինչ է կատարվել, բայց...», այսինքն՝ ենթադրվում է, որ խոսողը չի կարող ասել, քանի որ բազմաթիվ խանգա-

¹³ См. у К. Долинин, Имплицитное содержание высказывания // «Вопросы языкознания», № 6, М., 1983, էջ 45:

րող հանգամանքներ կան: Առանձին դեպքերում էլ թաքնված մտքի վերականգնումը կարող է բազմաթիվ տարբերակներ ունենալ, օրինակ՝ «Մի թե թագավորի ուժն է պակաս, թե...» (Մտ. Ջորյան, նշվ. աշխ., էջ 442), որում կարելի է ենթադրել, որ գուցե թագավորը ցանկություն չունի, հատուկ պատճառներ կան և այլն: Կամ՝ «Ամսից ավելի նա յուրաքանչյուրի հետ չէր խոսում գրեթե. մենակ ելնում էր գրոսանքի կամ առանձնանում իր սրահում և խորհում, խորհում...» (Մտ. Ջորյան, նշվ. աշխ., էջ 13) օրինակում կախման կետերից կարելի է ենթադրել, որ մտորողը խորհում է ինչ-որ բանի մասին, որը չի արտահայտվում ուղղակիորեն:

«Թաքնված» քերականության կարևոր բաղադրիչներից է թաքնված ստորոգումը: Է. Աթայանն առանձնացնում է ստորոգման երկու տեսակ՝ **ոչ բացահայտ** (իմպլիցիտ) և **բացահայտ** (էքսպլիցիտ) կամ, ըստ սերող քերականության, **խորքային** և **մակերեսային** ստորոգումներ¹⁴: Ըստ Է. Աթայանի՝ յուրաքանչյուր նախադասություն ընդգրկում է խորքային ստորոգումներ, որոնք ևս կարող են հարաբերակցվել էլ ավելի խորքային մակարդակում, օրինակ՝ «Նա առյուծ է» նախադասությունը մի փոխաբերություն է, որում ենթադրվում է երկու թաքնված ստորոգում՝ «Առյուծը հզոր է» և «Նա հզոր է», որոնք էլ ավելի խորքային մակարդակում հարաբերակցվում են «Նրա հզորությունը համեմատելի է առյուծի հզորության հետ» ստորոգմամբ¹⁵: Ասվածն ավելի պատկերավոր կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.



Այսինքն՝ բերված օրինակում ընդհանուր առմամբ ներակայված են երեք ստորոգումներ, սակայն այստեղ գործում է տրամաբանական մոտեցումը, քանի որ ցանկացած նախադասության մեջ խորքային մակարդակում միշտ տրամաբանորեն կարելի է ենթադրել ստորոգումներ: Նման մոտեցմամբ Է. Աթայանը թաքնված ստորոգումներ է առանձնացնում նաև բառակապացությունների կազմում, օրինակ՝ «սպիտակ ձյուն» ասելով հասկանում ենք, որ «ձյունը սպիտակ է»¹⁶:

Այսպիսով՝ արդի հայերենի շարահյուսական մակարդակում կարելի է առանձնացնել ներակայման երկու հիմնական գործառույթ. 1)

¹⁴ Տե՛ս Է. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 208:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 210:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 213:

հնարավորություն է տալիս բազմանդամ շարահյուսական կառույցը՝ բառակապակցությունը և նախադասությունը, ներկայացնելու ավելի սակավաբաղադրիչ կառույցով, որում դրսևորվում է լեզվի տնտեսման օրենքը, 2) նպաստում է շարահյուսական կառույցի տարրերի՝ բառերի և բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչ նախադասությունների փոխհարաբերությունների խորքային քննությանն ու ավելի հստակ ըմբռնմանը: Իբրև ներիմաստ պարունակող բառակապակցությունների բնորոշ օրինակ են երկանդամ դերբայագուրկ բառակապակցությունները և բայանվան ու նրա լրացումների կապակցությունները (կոչ երիտասարդներին, փախուստ բանտից): Առավել բազմազան են ներակայման դրսևորումները նախադասության կառուցվածքում՝ պայմանավորված հնարավորինս սեղմ խոսելու, արտահայտվելու ձգտումով: Ընդ որում, ներակայորեն կարող են արտահայտվել և՛ նախադասության տարրեր անդամներ, և՛ բարդ ստորադասական նախադասության գերադաս նախադասությունը, երբ որպես ներիմաստի դրսևորման միջոց հանդես է գալիս բացթողումը: Ավելին՝ նախադասությունն ինքը ամբողջությամբ կարող է հանդես գալ որպես որոշակի մտքի ներակայիչ՝ արտահայտության պլանում ներկայացնելով մի բան և բովանդակության պլանում թաքցնելով միանգամայն այլ ավելի խոր միտք: Բացթողումից որպես ներիմաստի դրսևորման միջոցից, պետք է տարբերակել գեղջումը, որը վերացնում է խոսքում կրկնությունները: Որպես ներիմաստ պարունակող յուրօրինակ տարրեր կարելի է առանձնացնել կախման կետերն ու «և այլն» արտահայտությունը:

***Բանալի բառեր** – ներակայում, շարահյուսական մակարդակ, բառակապակցություն, երկանդամ դերբայագուրկ բառակապակցություններ, ածականական բառակապակցություններ, բացթողում, գեղջում, թաքնված ստորոգում, կախման կետեր*

МИРАНУШ КЕСОЯН – Проявления имплицитности на синтаксическом уровне современного армянского языка: словосочетание и предложение. – На синтаксическом уровне современного армянского можно выделить две основные функции импликации: она 1) позволяет представить многочленную синтаксическую структуру, словосочетание и предложение более простой, в чём проявляется закон экономии языка; 2) содействует глубинному, более точному восприятию взаимоотношения элементов синтаксической структуры, слов и составных частей сложноподчинённых предложений.

В качестве типичного примера словосочетаний, содержащих имплицитный смысл можно привести двусоставное словосочетание и отглагольное существительное и сочетания его дополнений. Наиболее многообразны проявления импликации в структуре предложения, обусловленные стремлением изъясняться по возможности лаконично. При этом имплицитно можно выразить и разные члены предложения, и главную часть сложноподчинённого предложения, где имплицитный смысл проявлен пропуском. От пропуска, средства проявить имплицитный смысл, следует отличать эллипсис, исключаящий тавтологию в речи.

В качестве своеобразных элементов, содержащих имплицитный смысл, выступают многоточия и сокращение «и т. д.».

Ключевые слова: имплицитность, синтаксический уровень, словосочетание, двусоставные беспричастные словосочетания, адъективные словосочетания, пропуск, эллипсис, имплицитная предикация, многоточия

MIRANUSH KESOYAN – *Manifestations of Implicitly on the Syntactic Level of Modern Armenian: Word-Combinations and Sentences.* – Two main functions of the implicitity can be differentiated on the syntactic level of Modern Armenian: 1) it gives an opportunity to represent the multi-component syntactic structure – word-combination or sentence, with a less-component structure, where the principle of the linguistic economy is manifested, 2) it promotes the investigation of relationships among the components of syntactic structure – words and component-sentences of complex subordinate sentences deeply and comprehend them more clearly. The two-component word-combinations without any adverb and the verbal noun with its additions are the typical examples of the word-combinations including implicit meaning. The manifestations of the implicitity are more diverse in the sentence structure determined by the aspiration to speak or express yourself as briefly as possible. Besides, both the different components of sentences and the main sentence of the complex subordinate sentence can be expressed implicitly when omission functions as a means of the implicitity. Moreover, the sentence itself can function as a means of implicitity of some thought representing one thing on the expression plane and hiding a different, deeper thought on the content plane. From the omission as a means of implicitity, ellipsis should be differentiated which eliminates repetition in speech. The three periods (...) and the expression “etc.” can be separated as unique elements including implicitity.

Key words: *implicitly, syntactic level, word-combination, two-component word-combinations without adverbs, adjective word-combinations, omission, ellipsis, hidden predicate, three periods*

Ներկայացվել է՝ 14.01.2020

Գրախոսվել է՝ 25.03.2020

Ընդունվել է տպագրության՝ 25.04.2020